ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

# ԿԱՆՈՆՆԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՖՈՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂՀՐԱՏ—ՅԵՐԵՎԱՆ 1936

30 JAN 2018

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է։
ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ՄՈՒՐԱԼՈՎ

ԽՍՀՄ-ի ՊԵՏԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝ ՄԱԿԱՐՈՎ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ։
ԽՍՀՄ ՖԻՆԺՈՂԿՈՄ
ԳՐԻՆԿՈ

*Մոսկվա* 1935 *թ. նոյեմբերի* 17

---

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՖՈՆԴԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԲԱՆԿԻ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Ժողկոմխորհն իր «Գյուղբանկի գործունեության վերաբերյալ» սեպտեմբերի 22-ի վորոշման մեջ նշեց, վորպես Գյուղբանկի աշխատանքի խոշոր բաց, կոլտնտեսությունների ու բանկի կենդանի կապի թերի լինելը՝ նրանց ֆինանսական տնտեսության կազմակերպման ոգնության բնագավառում, վորի հետևանքով դրամական անբաժանելի ֆոնդերի զգալի մասն ոգտագործվել է Գյուղբանկի կոնտրոլից դուրս։ Միաժամանակ ԽՍՀՄ Ժողկոմխորհը հաստատել է կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի կազմության և այն Գյուղբանկում պահպանման կարգը։

Գյուղբանկի կարևորագույն խնդիրը համարելով կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի ներգրավումը բանկի հաշիվներում և նրանց ֆինանսական տնտեսության և հաշվառման կարգավորման բնագավառում օգնություն ցույց տալու գործում, ԽՍՀՄ Ժողկոմխորհը պարտավորեցնում է Գյուղբանկին.

ա) Իր գործունեության մեջ կիրառել կոլտնտեսությունների և Գյուղբանկի բաժանմունքների միջև հատուկ պայմանագրերի կնքման պրակտիկան, պարտավորեցնելով կոլտնտեսություններին, բանկում պահելու իրենց դրամական անբաժանելի ֆոնդերի ազատ մնացորդները, իսկ բանկին՝ կատարելու, կոլտնտեսությունների կարգադրությունների հիման վրա, նրանց կապիտալ ներդրումների հետ կապված հաշվարկային գործառնությունները, ինչպես նաև ցույց տալ կոլտնտեսություններին օգնություն՝ նրանց ֆինանսների և հաշվառումը կազմակերպելու գործում:

բ) Կոլտնտեսությունների պահանջի համաձայն ապահովել Գյուղբանկի բաժանմունքներում պահվող՝ անբաժանելի ֆոնդերի միջոցների անարգել բաց թողնելը:

գ) Կոլտնտեսություններին սեզոնական վարկեր տալու դեպքերում՝ նախապատվություն տալ, այլ հավասար պայմանների գոյության դեպքերում, այն կոլտնտեսություններին, վորոնք բարեխղճորեն կատարում են անբաժանելի դրամական ֆոնդերի կազմության, պահպանման և օգտագործման կարգը:

Այս կապակցությամբ Գյուղբանկի գործունեությունը՝ բանկի հաշիվներում կոլտնտեսությունների

1-35399գր



անբաժանելի ֆոնդերը ներգրավելու և նրանց ֆինանսներն ու հաշվառումը կազմակերպելու բնագավառում՝ հետագայում պետք է իրագործվի հետևյալ կանոնների հիման վրա:

## I. ԳՅՈՒՂԲԱՆԿՈՒՄ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՖՈՆԴԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՅԵՎ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Գյուղբանկի բաժանմունքները բաց են անում ամեն մի կոլտնտեսության—նրա հայտարարության համաձայն—անբաժանելի ֆոնդերի հաշիվ, վորին գրանցում են կոլտնտեսության կողմից մուծվող կապիտալ ներդրումներին հատկացնելու նպատակով հետևյալ դրամական միջոցները.

ա) Համաձայն Գյուղատնտեսական արտելի կանոնադրության 12-րդ կետի «Ե» ենթակետի՝ դրամական եկամուտներից անբաժանելի ֆոնդին կատարված հատկացումները (դրամական եկամուտների 10—20%-ի սահմաններում):

բ) Կոլտնտեսության անդամների մուտքի վճարները:

գ) Կոլտնտեսության համայնացված անպետք գույքի վաճառումից ստացված միջոցները (բանող անասուն, ինվենտար, արտադրական նշանակություն ունեցող շենքեր և այլն):

դ) Այն կոլտնտեսականներից ստացած միջոցները, վորոնք նախքան կոլտնտեսություն մտնելը, ծախել են իրենց ձիերը և ընդունելության ժամանակ պարտավորվել են 6 տարվա ընթացքում մուծել նրանց արժեքը (Նոր կանոնադրություն 7-րդ կետ)։

ե) Փչացած և մաշված գույքի վերաբերյալ պետապահովագրության կարգով ստացված հատուցումները (հիմնական արտադրական միջոցների վերաբերյալ միայն)։

զ) Գյուղբանկի կողմից անբաժանելի ֆոնդերի վերաբերյալ տրվող տոկոսները։

2. ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թ. սեպտեմբերի 22-ի «Կոլտնտեսություններում դրամական անբաժանելի ֆոնդերի կազմության կարգի մասին» վորոշման կապակցությամբ, դրամական անբաժանելի ֆոնդերի միջոցները մուծվում են բանկի հաշիվներում հետևյալ կարգով։

ա) Կոլտնտեսությունների դրամական յեկամուտներից անբաժանելի ֆոնդերի հատկացումները մուծվում են բանկում՝ դրամական մուտքի ու յելքի նախահաշիվների հաստատման ժամանակ՝ կոլտնտեսությունների ընդհանուր ժողովների կողմից սահմանված ժամկետների համաձայն։

բ) Մուտքի վճարները, ինչպես նաև համայնացված անպետք գույքի իրացումից ստացված գումարները մուծվում են բանկ՝ նրանց ստացման դեպքերում։

3. Համայնացված գույքի պետապահովագրական հատուցումները Պետապի մարմինների կողմից անմիջապես փոխանցվում են Գյուղբանկ՝ կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի հաշիվներին։



4. Բանկում անբաժանելի ֆոնդերի հաշիվներում պահվող կոլտնտեսային միջոցների վրա տարեկան մի անգամ բարդվում են տոկոսներ (տարվա վերջը)։

5. Անբաժանելի ֆոնդերի հաշվին կոլտնտեսություններին տրվող վարկերի փոխանցումն արգելվում է։

6. Անբաժանելի ֆոնդերի դրամական միջոցները մուծվում են Գյուղբանկի (Պետբանկի) հաշիվներում կոլտնտեսությունների կողմից հետևյալ ձևով։

ա) Կոլտնտեսությունների հանձնարարությամբ, Պետբանկի կամ խնայդրամարկղների իրենց հաշիվներից փոխանցումներ կատարելով։

բ) Կոլտնտեսությունների հանձնարարությամբ նրանց պարտապանների կողմից փոխանցումների ճանապարհով։

գ) Պետբանկի կամ փոստի միջոցով կանխիկ դրամ մուծելով։

7. Դրամական անբաժանելի ֆոնդերը ծախսվում են կոլտնտեսությունների կողմից, գյուղատնտեսական արտելի կանոնադրության 12-րդ կետի «Զ» յենթակետի համաձայն, կազմված դրամական մուտքի ու յելքի նախահաշվով նախատեսված ձեռնարկումների վրա։

8. Կոլտնտեսության՝ Պետբանկի, խնայդրամարկղի ընթացիկ հաշվում կամ իր դրամարկղում դրամական միջոցներ չլինելու դեպքում, վերջինը կարող է ժամանակավորապես ծախսել անբաժանելի ֆոնդերի միջոցները կապիտալ ներդրման աշխատանքների հետ կապ չունեցող տնտեսական կարիքների համար

(սերմերի, կերի գնում և այլն)։ Նման դեպքերում, կոլտնտեսությունների վարչությունը՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թ. սեպտեմբերի 22-ի վորոշման համապատասխանությամբ և շրջանային Գյուղբանկի բաժանմունքի հետ համաձայնեցնելով, սահմանում է անբաժանելի ֆոնդերից ծախսված գումարների վերականգնման ժամկետները։

Կոլտնտեսությունների վարչությունների կողմից փոխ վերցված գումարների, ինչպես նաև նրանց վերականգնման ժամկետների մասին բանկի բաժանմունքները կատարում են նշումներ՝ տվյալ կոլտնտեսության անբաժանելի ֆոնդի անձնական հաշվում։

9. Կոլտնտեսության անբաժանելի ֆոնդերի հաշիվներում պահվող միջոցների միակ կարգադրողը հանդիսանում է կոլտնտեսության վարչությունը։ Կոլտնտեսության կողմից գումարների դուրս գրելու նպատակով տրված դրամական չեկերը և կարգադրությունները իրավական են միայն այն դեպքերում, յերբ ունեն նախագահի (կամ նրա տեղակալի) և հաշվետարի (հաշվապահի) ստորագրությունները և հաստատված են կոլտնտեսության կնիքով։

10. Անբաժանելի ֆոնդերի հաշիվներից գումարներ են տրվում ինչպես անդրամական հաշվարկների կարգով, նույնպես նաև կոլտնտեսությունների գրավոր կարգադրությունների կամ չեկերի հիման վրա՝ դրամական կանխիկ միջոցներ տալու միջոցով։

Կոլտնտեսությունների անդրամական հաշվարկների դեպքերում՝ բանկի բաժանմունքները.

ա) Վճարում են կոլտնտեսությունների կողմից ակցեպտ յեղած կատարված աշխատանքների և ստացված ապրանքների հաշիվները։



բ) Կոլտնտեսությունների գրավոր կարգադրությունների հիման վրա ակրեդիտիվներ են բաց անում՝ այլ վայրերում գնումներ կատարելու համար։

գ) Կոլտնտեսությունների գրավոր կարգադրությունների հիման վրա՝ մարում են բանկին ունեցած նրանց պարտքերը, յերկարատև արտադրական վարկերի գծով։

Իր դրամական կարգադրությունների վրա կոլտնտեսությունը նշում է, թե ինչ նպատակի համար է ստանում անբաժանելի ֆոնդի միջոցները։

11. Բանկը կոլտնտեսության առաջին իսկ պահանջին և առանց վորևե արգելքի, գումարներ է բաց թողնում և փոխանցումներ է կատարում անբաժանելի ֆոնդի հաշիվներից։

Չի թույլատրվում անբաժանելի ֆոնդերի հաշիվներում պարտքի մնացորդ ունենալը։

12. Կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի հաշիվներին արգելք դնել չի թույլատրվում (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935-թ. մարտի 27-ի վորոշումը)։

Արգելված է բռնագանձել անբաժանելի ֆոնդի հաշիվներից զանազան գումարների պահանջներ, բացառությամբ այն դեպքերի՝ յերբ գոյություն ունեն դատական վորոշումներ՝ կապված ներդրումների գծով Գյուղբանկից տրված յերկարատև վարկերի մասին։

13. Դատական մարմինների վորոշման հիման վրա՝ անբաժանելի ֆոնդերի հաշիվներից յերկարատև արտադրական վարկերը մարելու նպատակով, գումարների բռնագանձումները թույլատրվում են միայն անբաժանելի ֆոնդի հաշվում՝ դատական վորոշման ներկայացնելու մոմենտին գոյություն ունեցող միջոցների 70 տոկոսի սահմաններում։

Այն դեպքերում, յերբ հաշվում յեղած միջոցների 70 տոկոսը չի ծածկում կոլտնտեսության դատական վորոշմամբ դուրս գրվող պարտքի գումարը, նրա հետագա մարումը կատարվում է նոր մուտքերի նույնպես 70 տոկոսի մասից, մինչև վերջնական հանգցնելը։

14. Արգելվում է կոլտնտեսությունների հաշիվներից դուրս գրել այն գումարները, վորոնք վերաբերում են կոլտնտեսականների պարտքերին։

15. Տեղեկանքներ կոլտնտեսությունների անբաժանելի հաշիվների դրության մասին կարելի յե տալ միայն կոլտնտեսությունների վարչություններին և վերստուգիչ հանձնաժողովներին, ինչպես նաև դատական մարմիններին՝ նրանց հատուկ գրավոր պահանջի հիման վրա։

16. Տարվա վերջին՝ կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի ոգտին բարդվում է 8%։

17. Անբաժանելի ֆոնդերի շուրջը հաշվարկումներ կատարելու համար, Գյուղբանկը կոլտնտեսություններից վոչ մի կոպեկ վարձատրություն չի ստանում։

18. Կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի հաշիվներում կատարված գրանցումների մասին, կոլտնտեսություններին իրազեկ դարձնելու նպատակով, բանկը ամիսը մեկ անգամ ուղարկում է կոլտնտեսություններին իրենց հաշիվների քաղվածքները։

19. Բանկի բաժանմունքները պարտավոր են ապահովելու կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի լրիվ ներգրավումը բանկի հաշիվներում։

Այդ նպատակով բանկի բաժանմունքները Հողբաժինների աջակցությամբ.

ա) Տանում են լայն բացատրական աշխատանք



բանկում անբաժանելի ֆոնդերի միջոցների պահպանման անհրաժեշտության ու նպատակահարմարության մասին, ոգտագործելով այդ նպատակով կոլտնտեսություններում կատարած իրենց այցելությունները՝ վարչ. նախագահների, վերստուգիչ հանձնաժողովների, հաշվետարների և կոլտնտեսական ակտիվի խորհրդակցությունները, ինչպես նաև մամուլը, ռադիոն և այլն։

բ) Դրամական մուտքի ու յելքի նախահաշիվները, կոլտնտեսությունների ընդհանուր ժողովների կողմից հաստատվելուց հետո, կնքում են կոլտնտեսությունների հետ հատուկ պայմանագրեր՝ դրամական անբաժանելի ֆոնդերի միջոցները բանկում պահելու համար, նշելով պայմանագրերում անդամների ընդհանուր ժողովի կողմից այդ միջոցները մուծելու համար հաստատված ժամկետները և գումարները։

գ) Հսկում են, վոր կոլտնտեսությունները կատարեն իրենց վրա ըստ պայմանագրերի վերցրած պարտավորությունները։

Անբաժանելի ֆոնդերի վերաբերյալ հաստատված կարգի խախտման բոլոր դեպքերի, կամ այդպիսինները վոչ իրենց նպատակներին ոգտագործման դեպքերի հայտաբերման մասին, բանկի բաժանմունքները հայտնում են կոլտնտեսությունների վերստուգիչ հանձնաժողովներին, Հողբաժիններին կամ ՄՏ-կայաններին, և նրանց աջակցությամբ աշխատանք են տանում ստիպելու համար կոլտնտեսություններին կատարելու իրենց վրա վերցրած պարտավորությունները։

20. Այն շրջաններում, վորտեղ Գյուղբանկը բա-

ժանմունքներ կամ տեղչական կետեր չունի, անբաժանելի ֆոնդերը Գյուղբանկի հաշիվներում ներգրավելու աշխատանքները, սույն կանոնների հիման վրա, կատարվում են Պետբանկի բաժանմունքների կողմից

## II. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

(Վերաբերում է միայն Գյուղբանկի բաժանմունքներին և տեղչական կետերին)։

31. Գյուղբանկի բաժանմունքները և տեղչական կետերը պարտավոր են ոգնելու կոլտնտեսություններին՝ նրանց ֆինանսական տնտեսության և հաշվառման կազմակերպման գործում։ Այս ոգնությունը պետք է կայանա հետևյալում։

ա) Բանկի բաժանմունքները մասնակցում են Հողբաժնում և ՄՏԿայանում կոլտնտեսությունների դրամական մուտքի ու ելքի նախահաշիվները քննելու աշխատանքներին։

Այս գործում նրանք պետք է հատուկ ուշադրություն դարձնեն հետևյալ խնդիրներին։

1. Արդյոք ճիշտ է ցույց տրված նախահաշվում անբաժանելի ֆոնդերի հաշվի մնացորդը՝ տարվա սկզբին։



2. Նախատեսված է արդյոք գույքի իրացումից ստացվող, ինչպես նաև մուտքի վճարներից ստացվող մուտքը։

3. Ճիշտ են արդյոք հաշվի առնված դեբիտորական և կրեդիտորական պարտքերը։

4. Ճիշտ են արդյոք հաշվի առնված յերկարատև վարկերի վճարումները։

5. Կապիտալ ներդրումների պլանը նախահաշվում ապահովված է արդյոք համապատասխան միջոցներով։

6. Համապատասխանում են արդյոք կատարվող հատկացումները անբաժանելի ֆոնդերին, վարչա-տնտեսական ծախսերի վերաբերյալ նոր կանոնադրության պահանջներին։

Կոլտնտեսությունների կողմից ներկայացված մուտքի ու ելքի նախահաշիվներում սխալներ հայտաբերելու դեպքերում, բանկի բաժանմունքները Հողբաժինների, ՄՏկայանների ու կոլտնտեսությունների միջոցով ուղղել են տալիս այդպիսիները։

բ) Բանկի բաժանմունքները պետք է ոգնեն Հողբաժիններին՝ վերջինների կողմից կոլտնտեսությունների տարեկան հաշվետվությունները քննելու աշխատանքներին, ուշադրություն դարձնելով դրամական մուտքի ու ելքի նախահաշիվների վերաբերյալ հարցերին։

գ) ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թ. մարտի 27-ի վորոշման կապակցությամբ, բանկի բաժանմունքները անմիջականորեն մասնակցում են կոլտնտեսությունների ֆինանսների և հաշվառման ընթացիկ ստուգման աշխատանքներին, ինչպես նաև նրանց ամբողջ ֆինանսական գործունեությանը փաստացի ստուգ-

ման յենթարկելու աշխատանքներին, վորոնք կատարվում են Հողբաժինների կողմից նախապես մշակված և հաստատված պլանի համաձայն։

դ) Բանկի բաժանմունքը հայտնում է վերստուգիչ հանձնաժողովներին կոլտնտեսության հետ ֆինանսական-վարկային հարաբերությունները ունենալու ընթացքում նկատված ամեն տեսակի անտնտեսավարության և ֆինանսական դիսցիպլինայի խախտման դեպքերի մասին և իր վողջ աշխատանքը կոլտնտեսությունների հետ կազմակերպում է վերստուգիչ հանձնաժողովների լայն աջակցության վրա։

ե) Աջակցում է կոլտնտեսություններին՝ դրամական մուտքի ու յելքի նախահաշիվները կազմելու և հաշվառումը կարգավորելու գործում։

զ) Ակտիվ մասնակցություն է ցույց տալիս կոլտնտեսությունների դեբիտորական պարտքերը լուծարքի յենթարկելու գործին։ Բանկի բաժանմունքի աշխատակիցները կոլտնտեսություն այցելելիս, ինչպես նաև հասարակական տեսուչների միջոցով, մանրամասնորեն պարզում են այդ պարտքերի չափը, նրա պատճառները և գոյացման ժամանակը՝ ըստ առանձին պարտապանների։ Կոլտնտեսություններին ոգնում են պետական, կոոպերատիվ և այլ կազմակերպությունների հետ իրենց հաշիվների ստուգման բնագավառում, ոժանդակում են, վոր դատական և արբիտրաժ մարմիններում կոլտնտեսությունների պարտքերի գործերն արագ լուծարքի յենթարկվեն, իրենց վրա վերցնելով կոլտնտեսությունների պարտքերը գանձելու հանձնարարությունները, այդ գործում անհրաժեշտ դեպքերում ոգտվելով ղեկավար, հսկող և դատական մարմինների աջակցությունից։



է) Աջակցում են կոլտնտեսության անպետք և չգործածվող գույքի հայտաբերման և իրացման աշխատանքներին։

ը) Հատուկ ուշադրություն են դարձնում կոլտնտեսություններում մշտական ֆինանսական ակտիվի ստեղծմանը (հասարակական տեսուչներ), իր աշխատանքներում միշտ հենվելով նրա վրա և ոգտագործելով առանձին հանձնարարությունների համար։

ԽՍՀՄ ԳՅՈՒՂԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝

(ՎԻՆՈՍՈՎ)

Պատ. խմբագիր՝ Ա. Մարուխյան
Տեխ-խմբագիր՝ Հ. Մուրադյան
Լեզվ. խմբագիր՝ Արմ. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Ցե. Հարությունյան
Գլավլիտի լիազոր Ս—457, հրատ. № 291, …
1/2 տպագրական թերթ՝ 1 թերթում 388…
Հանձնվել է արտադրության 36 թ. 10/I
Ստորագրված է տպագրելու 36 թ. 20/I
գինը — 1000.
Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդ…

ՀՀ Ազգային գրադարան
NL0977544

ЯНВ. 1936

1
3539